ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 120-Ա

ՄԱՍԻՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 3-րդ կետի պահանջները և ընդառաջելով Մասիսի Զարգացման Հիմնադրամի խնդրանքին /մտից մատյանի՝ 30.06.2021թ. թիվ 369/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաքում գտնվող 0.089, 0.1271 հա գյուղատնտեսական այլ հողատարածքը /ծածկագիր՝ 03-003-0717-0012, 03-003-0714-0001/,որը սահմանակից է Մասիսի Զարգացման հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող օտարվող հողամասով տարանջատված գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին և օտարվող հողամասը արտաքին պարագծով առնվազն 60 տոկոսով պարփակված է ընդլայնվող հողամասերով ու որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Մասիսի Զարգացման հիմնադրամին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 12426/ տասներկու հազար չորս հարյուր քսանվեց / ՀՀ դրամ, 1 հա-ի արժեքը 57500 /հիսունյոթ հազար հինգ հարյուր /ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**